*Հավելված*
*ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-26/8 ծածկագրով գնման*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովի*
*2026 թվականի մայիսի 27-ի N2 արձանագրության*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 27-ի N2 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-26/8

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի կարիքների համար ֆիզիկայի լաբորատորիայի սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-26/8 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Ընթացակարգի հրավերին կից ներկայացված հավելվածը անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել նոր խմբագրությամբ:

**Փոփոխության նկարագրություն:** Ընթացակարգի հրավերին կից ներկայացվող Հավելվածով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետը» սյունակով սահմանված «Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2026 թվականի օգոստոսի 15-ը ներառյալ, պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները ***» բառերը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2026 թվականի հոկտեմբերի 30-ը ներառյալ, պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները ***:»:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Էլոյանին:

Հեռախոսահամար՝ +374 98 389689 (ներքին հեռախոսահամար՝ 05)
Էլ. փոստ՝ a.arakelyan@promotion.am
Պատվիրատու՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ